ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2018- 26.03/250

26.03.2018 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ

2014թ. ապրիլի 17-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Նշված ցանկում ներառված մի շարք միջոցառումների պատասխանատու կամ համակատարող են հանդիսանում ՀՀ մարզպետարանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին՝

- 2017թ. ընթացքում արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ 6-րդ նպատակի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 7-րդ նպատակի 1-ին և 3-րդ միջոցառումների շրջանակներում, եթե այո՝
  - ինչ աշխատանքներ են իրականացվել և ինչ արդյունքներ են գրանցվել
  - արդյոք միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներ են հատկացվել, եթե այո՝ որքան և ինչ աղբյուրներից, ինչքանն է ծախսվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից

  (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ առանձին միջոցառումների)
- արդյո՞ք իրականացվել են այլ գործողություններ՝ ուղղված ռազմավարության իրականացմանը, եթե այո՝ որ միջոցառումների շրջանակներում և ինչ գործողություններ են իրականացվել,
- արդյո՞ք հասարակական կազմակերպությունները աջակցել են ռազմավարության իրականացմանը, եթե այո՝ որ կազմակերպությունները և ինչպես:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ Արթուր Սաքունց

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 1964
«04» 04 2018 թ.